

ՆԻԼՎԱՆ. — Mèz = Bégan = Ta, Alphabet international. — Հրատ. • 1922, Պարիզ:

Այս գիրքս հրատարակելով, կը գրէ Հեղինակն առանձնական նամակով, ևս ըդաւածած եմ մշտըն- ջնական մի տարածոն (պրօազանդ) ունենալ միջազգայինութեան մէջ... Գիր տրամադրել այն բազմաթիւ ցեղերուն՝ որոնք ազգային ենքու ու- նին, բայց գիր չունին, և այլոց մուրացածոյ գրերով քաշ կու տան իրենց կենաքըց, և այլն:

Ընդհանուր ազգերու համար՝ զործածական մի միակ այբուբեն մ'ունենալու և կամ ստեղ- ծելու գաղափարը՝ ընտիր և օգտակար է: Բայց Հեղինակը՝ իր հայերէն այբուբենը իր հիմ կը դնէ հանրազային այբուբեն մը յօրինելու, անշուշտ ուշ չէ գարձուած որ հանրազային այբուբեն մը այնակ պէտք է ըլլայ՝ որ եր- կրանտին գէթ զարգացած մասին համար հնա- րուած և զործածուած այբուբենէն շատ տար- բեր չըլլայ: Ռւսակ (ըստ իս) Հեղինակը լաւա- գոյն արդինիքի գուցէ հասնէր՝ թէ երկրական արգէն իսկ տարածուած այբուբենն մէջ պակ- սած ձայներուն համար միայն հնարէր նոր նշա- նազրեր, քան հիմնովին տարբեր և գծուարու- սանիկ այբուբեն մը ստեղծէր: Կ'ըսէ Հեղինակը որ ինքը էսակրանտոյի գաղափարէն շարժուեր և հնարէր է իր հանրազային Մեզ-քրեան-տա այբուբենն, ուստի աւելի տրամարանական պի- տի ըլլար՝ թէ էսպիկրանու հնարողին գրու- թեան հնտէնք, զործածութեան մէջ զնենով ինչ որ արդէն երկրազնութիւն վրայ զարգացած ժողովուրդները կը գործածեն, որ է ըսել լատին այբուբենը, որ պէտք էր օժտել այնպիսի նշա- նազրերով՝ որ անոր մէջ չեն գտնուիր՝ օտարա- խնու ծայներ հնչելու համար, և այդ նոր նշա- նազրերն ալ պէտք են ըլլալ այնքան վայելու և դիւրազիք՝ որպան են այժմնանները:

Հեղինակին հաւասար համոզուած եմ որ հայ այբուբենը աւելի կատարելազործեալ է քան ուրիշ շատ մ'ազգերու այբուբենները. բայց հոս խնդիրը գործնականութեան կամ լաւ եւս գոր- ծածականութեան վրայ ըլլալով և ոչ թէ տե- սական յատկութիւններու՝ հարկ է մէկդի թողովու ինչ ու տեսանաօրին լաւագոյնն է, և ընտրել ու գործածութեան մէջ զնել ինչ որ գործնա- կանութ դիւրազոյնն է:

Բայց թողով այս հարցը՝ տեսներ ինչ հե- տեւանք ունեցեր է իր իրեն հիմ ընտրած հայ այբուբենը՝ Հեղինակը հայ այբուբենն ալ պա-

կասաւոր կը գտնէ և հեռի իր հանրազային այբուբեն ծառայելու յատկութենէն. ուստի կը հնարէ իրագիւս Մեզ-քրեան-տա հանրազային այբուբենը, զոր «անուռն կերպով գերազանց» կը հոյակէ հայ այբուբենէն, և որուն հիմքը սներկայացնէ Ծնթերցողին՝ չորս էջերու մէջ, որոց փափ մ'անգամ ուշադիր ընթերցումն ան- գամ ինձ որոշ զարգափար մը չընծայեց թէ ինչ ըսել կ'ուզէ այդ չորս էջերու մէջ իր գծագրած երկարագիր և ներուի ըսել այլանդայի ձեւերով. տառեր՝ որ ոչ միայն այժման հայ այբուբենի վայելուց գերազային ձեւերէն հեռու են, այլ և հնագոյն երկաթագրի ձեւերէն անգամ տիեզդ ու բարդ գիծերով կազմուած են:

Իրազիւս այբուբենի տառերը, զորս 22-24 էջերով իրար ենու կը ցուցադրէ թիւով 55 են. ասոնցմով կը գործէ 25-46 էջերու մէջ շատ մը բառախումբեր՝ իր տիպար գրութեան և 47-53 էջերու մէջ ալ քանի մը շարունակուած գրու- թեան օրինակներ, և յետոյ պրակը կը գերջա- ցընէ այս նոր այբուբենի օգտակարութեան և տարածման ջանքերու համար յօրդորակով մը:

Ինձ այնպէս կ'երկի որ այս առաջարկուած հանրազային այբուբենը՝ իր թերութիւններով՝ շատ հեռու է փափառուած օգտաշահ նպատակին հասնելէ:

Գիտ ուզեր հոս ոչ անոր թերութիւնները նշա- նակել, և ոչ ալ անյաջողութեան պատճառները թուել, որովհետեւ համոզուած եմ թէ նոյնը զուցէ քանի մը զարտուններու հուլ յորդերուն մէջ պիտի թաղուի՝ իրեն մէտնշննաւոր վկայ մը Հեղինակին բարի զարգափարին ու շանքին, բայց անյաջող փորձին:

Հ. Ա. Վ. Տիւռեսաւ

ՑԱԿՈՒԵԼԱՆ, ՍԻՄՈՆ. — Գետրոս Դուրեան (գրական-քնննական վերլուծութիւն), Վիհե- նա. Ալիթեարեան Տպարան 1922.

Պր. Ցակուրեան սկսած է կարգաւ ուսումնա- սիրել հայ արդի գրականութեան ներկայացու- ցիչները, և արգէն հրապարակ հանած է առջի հատորը իր այս ուսումնասիրութեանց՝ նուի- րուած Պ. Գորենանի կեանքին և զործին, որուն մահուան յիսնամենք տարեդարձն էր այս տարի. անշուշտ մատածեր է Պ. Ցակուրեան ծագեհիփունց մը ծանել նեղերեցու բանաստեղծին, անոր յիսնա- մեայ սեւութիւնը զուարթացնելու համար: Գիրքը վերլուծու մըն է Գորենանի կեանքին և զործին,